ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ԵԴ2/8818/02/25

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

28 օգոստոսի 2025թ | ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի **դատավոր Գ. Վարդանյանս**, քննության առնելով «ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՅ ՋԵՅ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունն ընդդեմ «Նորք-Մարաշ Բժշկական Կենտրոն» ՓԲ ընկերության՝ 29.01.2025թ. կնքված թիվ «ՆՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/29-1» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՅ ՋԵՅ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության ներկայացուցիչը 2025թ. օգոստոսի 22-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ «Նորք-Մարաշ Բժշկական Կենտրոն» ՓԲ ընկերության՝ 29.01.2025թ. կնքված թիվ «ՆՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/29-1» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումը անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Էլեկտրոնային եղանակով վարվող գործը մակագրվել է դատավոր Գ. Վարդանյանին 2025թ. օգոստոսի 22-ին, իսկ Դատավորին հասանելի է դարձել 2025թ. օգոստոսի 25-ին:

Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121 և 122 հոդվածների պահանջներին համապատասխան և նույն

օրենսգրքի 126 և 127 հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 127, 199-200, 234.5 և 234.6 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ԱՐ ՁԻ ԸՆԴ ԷՅ ՁԵՅ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունն ընդդեմ «Նորք-Մարաշ Բժշկական Կենտրոն» ՓԲ ընկերության՝ 29.01.2025թ. կնքված թիվ «ՆՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/29-1» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումը անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:

Թիվ ԵԴ2/8818/02/25 քաղաքացիական գործով կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2025թ. հոկտեմբերի 3-ին դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Գրիգորի Վարդանյան

Digitally signed by VARDANYAN GRIGORI 1507850611
Date: 2025.08.28 18:31:27 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am